# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 49 - 50 (16245) ՇԱԲԱԹ, 21 ՀՈՒՆԻՍԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵՏՐԻ

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՆՈՐ ԱԶԴԱԿ ՀԱՂՈՐԴԵՑԻՆ ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԻԴՐԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ԹԲԻԼԻՍԻ





*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հրավերով, պաշտոնական այցով, հունիսի 18-19-ին, Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը: Հայաստանի նախագահի գլխավորած պատվիրակության կազմում էին արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը, Ազգային ժողովի փոխնախագահ Հերմինե Նաղդալյանը, տրանսպորտի եւ կապի նախարար Գագիկ Բեգլարյանը, սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, ԱԺ պատգամավոր Աշոտ Արսենյանը, գրող-հրապարակախոս Մերուժան Տեր-Գուլանյանը:*

*Թբիլիսիի օդանավակայանում Սերժ Սարգսյանին եւ Հայաստանի պետական պատվիրակության անդամներին դիմավորեցին Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն, պաշտոնական այլ անձինք: Դիմավորողների թվում էին նաեւ Վրաստանմում Հայաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Վահագն Աֆյանը եւ Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլին:*

### ԴԻՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Թբիլիսիի Հավլաբարի Վրաստանի նախագահի նստավայրում տեղի ունեցավ Հայաստանի նախագահի դիմավորման պաշտոնական արարողությունը:

Արարողության ավարտից հետո կայացավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու եւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի առանձնազրույցը: Երկու երկրների նախագահների առանձնազրույցին հաջորդեցին Վրաստանի եւ Հայաստանի պաշտոնական պատվիրակությունների մասնակցությամբ, ընդլայնված կազմով բանակցությունները:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկու երկրների փոխհարաբերություններին վերաբերող ընդգրկուն հարցեր եւ՝ ապագա համագործակցության հեռանկարները:

Նախագահները քննարկել են տնտեսական եւ ենթակառուցվածքային նախագծեր, կրթության բնագավառի հարցեր եւ ուշադրություն են դարձրել զբոսաշրջության ու մշակույթի ոլորտներում համագործակցության հեռանկարներին:

«Ներկայիս հանդիպումը մեծ նշանակություն ունի, քանի որ հունիսի 27-ին Վրաստանը ստորագրելու է Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագիրը, իսկ մեր բարեկամներն ու հարեւանները մոտ ժամանակներում դառնալու են Մաքսային միության անդամը: Նման պայմաններում ցանկանում եմ առանձնակի ընդգծել Հայաստանի հետ առեւտրական հարաբերությունները, որտեղ դրական դինամիկա է նկատվում, եւ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել իմ գործընկերոջը՝ պարոն Սարգսյանին, այն բանի համար, որ բոլոր հիմնական ուղղություններում մեր հայացքները համընկնում են, այդ թվում՝ մշակույթի, գիտության եւ կրթության

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ 12 ՔԱՂԱՔՆԵՐԻՑ 8-Ի ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵՎ 84 ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻՑ 37-Ի ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՆՑԿԱՑՎԻ ԵՐԿՐՈՐԴ ՏՈՒՐ

*Հունիսի 15-ին Վրաստանում անցկացվեցին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Հիշեցնենք, որ ընտրական նոր օրենսգրքի համաձայն, հունիսի 15-ին ուղղակի ընտրակարգով ընտրվելու էին 12 ինքնակառավարման քաղաքների քաղաքապետերը եւ 84 մունիցիպալիտետի վարչության նախագահները, ինչպես նաեւ մունիցիպալիտետների սակրեբուլոների անդամները՝ համամասնական եւ մեծամասնական համակարգերով:*

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակված տվյալների համաձայն, 12 ինքնակառավարման քաղաքներից 4-ում քաղաքապետի պաշտոնի համար պայքարում հաղթանակել են «Վրացական երազանք» կոալիցիայի ներկայացուցիչները, նրանք հաղթանակել են նաեւ 47 մունիցիպալիտետների վարչության նախագահների պայքարում: Հետեւաբար, 8 ինքնակառավարման քաղաքների քաղաքապետերի եւ 37 մունիցիպալիտետների վարչության նախագահների ընտրության համար անցկացվելու է երկրորդ տուրը:

Այսպիսով, նորանկախ Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ անցկացվող ինքնակառավարման քաղաքների քաղաքապետերի ուղղակի ընտրություններում Ախալցիխեում՝ 60,44 ձայներով քաղաքապետ է ընտրվել կոալիցիայի ներկայացուցիչ Գիորգի Կապանաձեն, Ամբրոլաուրիում՝ Ռատի Նամգալաձեն (82,79 տոկոս), Քութայիսիում՝ Շոթա Մուրղուլին (51 տոկոս) եւ Զուգդիդիում՝ Իրակլի Գոգոխիան (58,33 տոկոս): Բոլոր հաղթողները ներկայացնում են իշխող «Վրացական երազանք» կոալիցիան: Մնացած 8 քաղաքներում, այդ թվում նաեւ Թբիլիսիում քաղաքապետի ընտրության համար անցկացվելու է երկրորդ տուրը: Հատկանշական է, որ տեղական ընտրություններում հիմնական պայքարը ծավալվել էր «Վրացական երազանք» կոալիցիայի ու «Միասնական ազգային շարժման» միջեւ: Այսպես, Թբիլիսիի քաղաքապետի համար մրցույթի երկրորդ տուրում կմրցակցեն կոալիցիայի թեկնածու Դավիթ Նարմանիան (նա ստացավ քվեների 46,12 տոկոսը) եւ «Ազգայինների» թեկնածու Նիկանոր Մելիան (27,89 տոկոս): Թելավիի քաղաքապետի պաշտոնի համար կպայքարեն կոալիցիայի ներկայացուցիչ Պլատոն Կալմախելիձեն (42,77 տոկոս) եւ «Ազգային» Ալեքսի Չուլիաշվիլին (22,64 տոկոս), Ռուսթավիում՝ կոալիցիայի թեկնածու Դավիթ Ջիքիան (38,56 տոկոս) եւ «Ազգային» Մամուկա Չիքովանին (29,3 տոկոս), Բաթումիում՝ «Երազանքի» թեկնածու Գիորգի Երմակովը (45,75 տոկոս) եւ «Ազգային շարժման» ներկայացուցիչ Գիորգի Դիասամիձեն (17,44 տոկոս):

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

# ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՏՈՒՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՀՈՒԼԻՍԻ ՎԵՐՋԻՆ

*Վրաստանի ինքնակառավարման ութ քաղաքների քաղաքապետերի եւ շրջանային վարչակազմերի ղեկավարների ընտրությունների երկրորդ տուրը կանցկացվի մինչեւ հուլիսի վերջը:*



Այդ մասին հունիսի 18-ին հայտարարեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Թամարա Ժվանիան:

«Վրաստանի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների երկրորդ տուրի ամսաթիվը նախապես որոշելը շատ դժվար է, քանի որ այն կապված է տեղամասային եւ տարածքային ընտրական հանձնաժողովներում հնարավոր բողոքարկման եւ հնարավոր դատական գործընթացների ամսաթվերի հետ: Մինչ այդ հնարավոր չէ պաշտոնապես նշանակել քվեարկության երկրորդ տուրի ամսաթիվը: Կարող եմ ասել, թե բացառված է, որ ընտրությունների երկրորդ տուրը տեղի ունենա օգոստոսին: Ընտրությունների անցկացման վերջնաժամկետը հուլիսի երկրորդ կեսն է»,- հայտարարեց Թամար Ժվանիան:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՆՈՐ ԱԶԴԱԿ ՀԱՂՈՐԴԵՑԻՆ ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԻԴՐԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ոլորտում»,-հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

«Մենք միատեսակ ենք տեսնում ապագան»,- ընդգծեց Վրաստանի նախագահը:

Իր հերթին Հայաստանի նախագահը շնորհակալություն հայտնեց իր պաշտոնակցին ջերմ ընդունելության եւ կառուցողական երկխոսության համար:

«Հայ-վրացական գործընկերության հետեւողական ամրապնդումը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գերակայություններից է: Հարավային Կովկասի տարածաշրջանում առկա փխրուն կայունությունն ու խաղաղությունը մեծապես պայմանավորված են Հայաստան-Վրաստան համագործակցության արդյունավետությամբ եւ ամրությամբ: Մենք մշտապես հարգել ենք միմյանց որոշումները՝ գիտակցելով, որ յուրաքանչյուրիս առաջնահերթ նպատակն է սեփական պետության ամրապնդումը եւ ուրախացել ենք դրանով, քանի որ Հայաստանն ու Վրաստանն ուժեղ են միմյանցով եւ միմյանց հետ»,- հայտարարեց Սերժ Սարգսյանը:

Բանակցությունների ավարտից հետո Գիորգի Մարգվելաշվիլին եւ Սերժ Սարգսյանը համատեղ մամլո ասուլիսում հանրագումարեցին բանակցությունների արդյունքները, հանդես եկան համատեղ հայտարարությամբ:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Նույն օրը կայացավ պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հանդիպումը Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու հետ:



Հանդիպմանը կողմերը քննարկեցին վրաց-հայկական միջպետական փոխգործակցության օրակարգին վերաբերող հարցերի լայն շրջանակ: Զրուցակիցներն ընդգծեցին միջխորհրդարանական համագործակցության բացառիկ նշանակությունը Վրաստանի եւ Հայաստանի միջեւ փոխշահավետ համագործակցության հետագա զարգացման եւ խորացման գործում:

Զրուցակիցները համակարծիք էին, որ անհրաժեշտ է պարբերական դարձնել միջխորհրդարանական բարեկամության խմբերի, խորհրդարանների մշտական հանձնաժողովների հանդիպումները՝ ի նպաստ երկկողմ կապերի առավել սերտացման եւ երկու երկրների միջեւ տարբեր մակարդակներում շփումների ակտիվացման:



Միջպետական հարաբերությունների ամրապնդման գործում մեծապես կարեւորելով բարձր մակարդակի փոխայցելությունները՝ կողմերը վստահություն հայտնեցին, որ ներկայիս հանդիպումը նոր խթան կհաղորդի երկու եղբայրական ժողովուրդների շահերի փոխադարձ հարգանքի վրա հիմնված վրաց-հայկական ավանդական բարեկամական եւ բարիդրացիական հարաբերություններին:

## ԳԱԼԱ-ՀԱՄԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ 300-ԱՄՅԱԿԻՆ

Հունիսի 18-ի երեկոյան, Վրաստանի եւ Հայաստանի նախագահներ Գիորգի Մարգվելաշվիլին եւ Սերժ Սարգսյանը Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան պետական ակադեմիական թատրոնում ներկա գտնվեցին Սայաթ-Նովայի 300-ամյակին նվիրված գալա համերգին:

## ԱՌԱՆՁՆԱԿԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ

Հայաստանի նախագահի՝ Վրաստան կատարած պաշտոնական այցի երկրորդ օրը կայացավ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու եւ Սերժ Սարգսյանի հանդիպումը:



Հանդիպմանը զրուցակիցները քննարկեցին վրաց-հայկական հարաբերություններին եւ հատկապես այդ հարաբերություններում կարեւոր տեղ զբաղեցնող տնտեսական բաղադրիչի մեծ ներուժին վերաբերող հարցեր, անդրադարձան՝ ի շահ երկու երկրների այդ ներուժի լիարժեք օգտագործման հնարավորություններին: Վրաստանի վարչապետն ու Հայաստանի նախագահը համոզվածություն հայտնեցին, որ երկկողմ ջանքերի շնորհիվ հնարավոր կլինի առավել ընդլայնել տարբեր ոլորտներում փոխշահավետ համագործակցության շրջանակները:

Հանդիպմանը գոհունակությամբ արձանագրվեց, որ Վրաստանն ու Հայաստանը վերջին ժամանակահատվածում ձեռքբերումներ են ունեցել առեւտրատնտեսական համագործակցության զարգացման գործում՝ ամուր հիմք ստեղծելով այն ավելի բարձր մակարդակի տեղափոխելու համար: Սերժ Սարգսյանը վստահություն հայտնեց, որ ընթացիկ տարում Հայաստանի եւ Վրաստանի միջեւ տնտեսական համագործակցության ուղղությամբ միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստի անցկացումը նոր խթան կհաղորդի տնտեսական համագործակցությանը եւ կնպաստի առեւտրաշրջանառության աճն ավելի համակարգված դարձնելուն:

Հանդիպման ավարտին Վրաստանի վարչապետի եւ Հայաստանի նախագահի ներկայությամբ ստորագրվեցին վրաց-հայկական համագործակցության զարգացմանն ու խորացմանն ուղղված փաստաթղթեր: Մասնավորապես, ստորագրվել են «Վրաստանի կառավարության եւ Հայաստանի Հանրապետության կառավարության միջեւ զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին համաձայնագիր» եւ «Վրաստանի կառավարության եւ Հայաստանի Հանրապետության կառավարության միջեւ գաղտնի տեղեկատվության փոխանակման եւ փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագիր»:

* * *

Հունիսի 19-ին Վրաստանի մայրաքաղաքում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, պաշտոնական պատվիրակության անդամների ուղեկցությամբ, այցելեց «Հերոսների» հրապարակ եւ ծաղկեպսակ դրեց հուշակոթողին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՅՑԵԼԵՑ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ ԵՎ «ՀԱՅԱՐՏՈՒՆ» ԿԵՆՏՐՈՆ

Վրաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Հայաստանի պետական պատվիրակության անդամների ուղեկցությամբ, հունիսի 19-ին այցելեց Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցի: Հարգարժան հյուրերին դիմավորեցին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, հոգեւոր դասը, վիրահայ համայնքի ներկայացուցիչները:

Թեմի «Հայարտուն» կրթա-մշակութային եւ երիտասարդական կենտրոնում Հաեյաստանի նախագահին ջերմորեն հյուրընկալեցին կենտրոնի Մովսես Խորենացու անվան նախակրթարանի սաները:

Վիրահայոց թեմի առաջնորդը Հայաստանի նախագահին ներկայացրեց կենտրոնը, պատմեց այս մշակութային օջախի գործունեության մասին, որը նպատակաուղղված է Վրաստանում մայրենի լեզվի պահպանմանը, ազգային մշակույթի զարգացմանը, հայ-վրացական բարեկամական կապերի խորացմանը:




## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԵԿՆՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ

Ավարտելով պաշտոնական այցը Վրաստան՝ նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը հունիսի 19-ին վերադարձավ Երեւան:

Թբիլիսիի օդանավակայանում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին եւ նրա գլխավորած պատվիրակության անդամներին ճանապարհեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին: Ճանապարհողների թվում էին Վրաստանի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Իրինե Իմերլիշվիլին, պաշտոնական այլ անձինք: Ճանապարհողների թվում էին նաեւ Վրաստանում Հայաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Վահագն Աֆյանը եւ Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլին:



# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԳՈՐԾԱԴԻՐ

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

***Հունիսի 19-ին Վրաստանի նախարարների կաբինետը հաստատեց Վրաստանի նոր ազգային ռազմավարությունը:***



Ներկայացնելով նոր ռազմավարությունը, Վրաստանի Անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալ Թեննա Ակուբարդիան պարզաբանեց, որ 2005 թվականից հետո, երբ ընդունվել է նախորդ փաստաթուղթը, Վրաստանը վերապրել է 2008 թվականի օգոստոսյան պատերազմը: Համապատասխանաբար, վերագնահատվել են երկրի անվտանգության հետ կապված փաստաթղթերը:

Ակուբարդիայի խոսքով՝ նոր ռազմավարությունում հիմնարար փոփոխություններ չկան, մնացել է այն կետը, ըստ որի Վրաստանի անվտանգության սպառնալիքը գալիս է Ռուսաստանից, կրկին հիշատակվում են ռուսական ագրեսիա եւ «սողացող անեքսիա» տերմինները, ասված է, որ Ռուսաստանի Դաշնության կողմից Վրաստանի տարածքների օկուպացումը խախտում է Վրաստանի ինքնիշխանությունը եւ տարածքային ամբողջականությունը եւ ապակայունության գլխավոր աղբյուրն է: Բացի այդ, թվարկված են մի ամբողջ շարք սպառնալիքներ՝ սկսած անդրազգային կիբեռանվտանգությունից մինչեւ բնական աղետները:

ԷԿՈՆՈՄԻԿԱ



## 5 ՏՈԿՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ Է

***Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրու հայտարարությամբ, ներկա տվյալներով, 2014 թվականի պետբյուջեով ծրագրված 5 տոկոսանոց աճի ապահովումը իրատեսական է:***

Նախարարը խոսեց 2014 թվականի հունվար-մայիս ամիսներին փոխանցած հարկային եկամուտների մասին, որը կազմել է 2 միլիարդ 786,6 միլիոն լարի: Նախարարի խոսքերով, այդ գումարը 130,6 միլիոն լարիով գերազանցում է անցյալ տարվա համապատասխան ժամանակամիջոցի ցուցանիշը: Ըստ Նոդար Խադուրու, եկամուտների առաջադրանքը կատարվել է 101 տոկոսով:

Եկամտահարկի տեսքով բյուջե է փոխանցվել 820,5 միլիոն լարի, ինչը 61 միլիոնով գերազանցում է անցյալ տարվա ցուցանիշը:

Ֆինանսների նախարարի հայտարարությամբ, 2014 թվականի առաջին եռամսյակում ՀՆԱ-ն կազմել է 6 միլիարդ 879 միլիոն լարի, ինչը 605 միլիոնով լարիով գերազանցում է անցյալ տարվա համապատասխան ժամանակամիջոցի ցուցանիշը:

Ֆինանսների նախարարն անդրադարձավ նաեւ չհարկադրվող նվազագույնի վերադարձման հարցին: Նրա խոսքերով, ապրիլի 1-ից սկսված չհարկադրվող նվազագույնի վերադարձման ծրագրի շրջանակներում ընթացիկ տարվա ապրիլ-մայիս ամիսներին ֆիզիկական անձանց վերադարձվել է շուրջ 90 միլիոն լարի:

ԿՐԹԱԿԱՆ

## ՄԵԿՆԱՐԿԵՑ ՔՆՆԱԿԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

***Վրաստանի ողջ մասշտաբով, հունիսի 18-ին մեկնարկեց շրջանավարտների, դիմորդների, բուհերի ուսանողների եւ մանկավարժների քննական քարտերի հանձնումը:***

Այդ մասին տեղեկացրել է Վրաստանի քննությունների ազգային կենտրոնը:

Շրջանավարտները անվանական քարտերը կարող են ստանալ անմիջականորեն դպրոցներում: Դիմորդները, ովքեր արդեն ավարտել են դպրոցը եւ մագիստրատուրայի սովորողները քարտերի համար պետք է ներկայանան քննությունների գրանցման ժամանակ նշված հասցեով: Իսկ ուսանողներին պլաստիկ քարտերը կտրվեն անմիջականորեն բուհերում:

Քննական քարտեր կտրվեն նաեւ հավաստագրման քննությունների համար գրանցված մանկավարժներին: Դրանց ստացման համար մանկավարժները դիմելու են համապատասխան հանրակրթական ռեսուրս-կենտրոններին: Ինչ վերաբերում է այն դիմորդներին, ովքեր գրանցման ժամանակ չեն նշել քննության անցկացման վայրը, ապա նրանք քարտերը կարող են ստանալ քննությունների ազգային կենտրոնում, ժամը 10-ից մինչեւ ժամը 18-ը: Էլեկտրոնային քարտը պարունակում է այն անհրաժեշտ տեղեկատվությունը, որը պարտադիր է միասնական ազգային քննություններին մասնակցելու համար: Քարտում նշված են նաեւ տիրոջ տվյալները:

Նշենք, որ 2014 թվականին միասնական ազգային քննությունները կմեկնարկեն հունիսի 26-ին: Հունիսի 26-27-ին ծրագրված առաջին քննությունը կանցկացվի վրաց լեզվից եւ գրականությունից: Հունիսի 30-ին եւ հուլիսի 1-ին կանցկացվի ընդհանուր ունակությունների թեստավորումը: Անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն եւ ռուսերեն լեզուների քննությունները նշանակված են հուլիսի 4-ին, հուլիսի 8-ին կանցկացվի վերոնշյալ լեզուների գրականության քննությունը: Հուլիսի 9-ին կանցկացվեն աշխարահագրության, հուլիսի 10-ին՝ պատմության, հուլիսի 11-ին՝ մաթեմատիկայի, հուլիսի 14-ին՝ քիմիայի, հուլիսի 15-ին՝ կենսաբանության, հուլիսի 16-ին՝ ֆիզիկայի եւ կերպարվեստի ու կիրառական արվեստի քննությունները:

Քննությունների ազգային կենտրոնի տեղեկատվությամբ, այս տարի միասնական ազգային քննություններին մասնակցելու համար գրանցվել է ավելի քան 36 հազար դիմորդ, իսկ ուսուցիչների հավաստագրման քննություններին մասնակցելու ցանկություն է հայտնել ավելի քան 19 հազար մանկավարժ:



Ուսուցման գրանտի ստացման համար քննությանը մասնակցելու ցանկություն է հայտնել 4500 ուսանող: Այդ քննությունը կանցկացվի հուլիսի 14-ին:

Նշենք, որ մագիստրատուրային քննություններին մասնակցելու համար էլեկտրոնային դիմումը լրացրել է ավելի քան 12 հազար դիմորդ:

Ինչպես տեղեկացրել է քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին, միասնական ազգային քննությունների համար նախատեսված թեստերը Մեծ Բրիտանիայից արդեն ստացվել են:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ՄԱՅԱ ՓԱՆՋԻԿԻՁԵ. ԵՐԵՔ ՊԱՅՄԱՆ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ

***Հունիսի 19-ին ՌԴ արտաքին գործերի փոխնախարար Գրիգորի Կարասինը հայտարարել էր, թե «Ռուսաստանը որոշում չի ընդունել 2008 թվականի օգոստոսին դրանց (դիվանագիտական հարաբերությունների) խզման մասին, ուստի Ռուսաստանը չէ, որ պետք է մտածի դրանց վերականգնման պաշտոնական կողմի մասին»:***

Մեկնաբանելով ռուս դիվանագետի հայտարարությունը, Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն նշեց այն երեք պայմանները, որոնք Ռուսաստանը պետք է կատարի երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու համար:

«Դրանք են՝ երկրի ապաօկուպացումը, հրաժարումը (Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի) անկախության ճանաչումից եւ հրադադարի վերաբերյալ 2008 թվականի օգոստոսի 12-ի համաձայնագրի կատարումը»,- հայտարարեց Մայա Փանջիկիձեն:

Նրա խոսքերով, Ռուսաստանի հետ երկխոսության ոչ մի ձեւաչափով, ներառյալ Ժնեւյան բանակցությունները եւ երկու երկրների հատուկ ներկայացուցիչների հանդիպումները, դիվանագիտական հարաբերությունների վերականգնման հարց չի քննարկվել:

Իսկ ինչ վերաբերում է 2008 թվականի հոկտեմբերից անցկացվող Ժնեւի բանակցություններին, որին մասնակցում են Վրաստանի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի պատվիրակությունները, աբխազական եւ հարավօսական կողմերի ներկայացուցիչները, ապա հունիսի 19-ին Վրաստանի պատվիրակությունը Ժնեւի քննարկումների ընթացքում չի կարողացել քննարկել օրակարգով նախատեսված բոլոր հարցերը, քանի որ Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի ներկայացուցիչները լքել են բանակցությունները դրանց սկսվելուց մի քանի րոպե անց:

«Այդ ապակառուցողական գործողությունները մեզ հնարավորություն չտվեցին ամբողջությամբ քննարկել Ժնեւի բանակցությունների օրակարգով նախատեսված հարցերը: Առաջին անգամը չէ, որ նման բան է տեղի ունենում: Ցավոք, որոշակի փաստեր եղել են նաեւ բանակցությունների այլ փուլերում»,- Ժնեւում հայտարարեց Վրաստանի արտաքին գործերի առաջին փոխնախարար Դավիթ Ջալկալիանին:

ՋԼՄ-ների տվյալներով՝ աբխազական եւ հարավօսական կողմերը չեն ցանկացել քննարկել Աբխազիայում եւ Ցխինվալիի տարածաշրջանում իրենց տներ հարկադիր վերաբնակների եւ փախստականների վերադառնալու հարցը: «Դա այն իրավունքն է, որը ոչ ոք չի ժխտում, ներառյալ նաեւ այդ մասնակիցները»,- հայտարարեց հաշտության եւ քաղաքացիական իրավահավասարության առաջին փոխնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին:

Ժնեւի բանակցությունների հաջորդ փուլը նշանակված է հոկտեմբերի 7-8-ին:



### ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆԸ

*Հունիսի 27-ին նախատեսված Վրաստան-Եվրամիություն ասոցիացման համաձայնագրի ստորագրման արարողությանը Վրաստանի նախագահը չի մասնակցի: Այդ մասին հունիսի 20-ին հայտարարեց Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն: Նրա խոսքերով, վրացական պատվիրակությունը կներկայացվի 4+1 սկզբունքով, այսինքն՝ Բրյուսել կմեկնի Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու պատվիրակությունը, որի կազմում կլինեն էկոնոմիկայի, արդարադատության, եվրոպական եւ եվրատլանտյան կառույցների ինտեգրման նախարարները:*

### ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է

*«Բազրոբայում» առեւտրականների՝ առանց դրամարկղային սարքերի գործունեության թույլտվությունը երկարաձգվել է մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը:*

*Այդ հարցով «Հարկային օրենսգրքում» կատարվել են փոփոխություններ:*

*Օրինանախագծի համաձայն, ֆիզիկական անձինք, ովքեր չեն օգտվում վարձու աշխատողների ծառայությունից եւ տնտեսական գործունեություն են տարածում շուկայի տարածքում տեղակայված ոչ ստացիոնար առեւտրակետերով, այդ թվում՝ վաճառասեղաններով, մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը ազատվում են վերահսկիչ դրամարկղային սարքերից օգտվելու պարտավորությունից:*

### ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ՎՐԱՑ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թբիլիսիի մերձակա Վազիանի զորափորձարանում անցկացվեցին վրաց-ամերիկյան “Agile Spirit 2014” զորավարժություններ:*

*«Վրաստանի կողմից վարժանքներին մասնակցում էին 550 զինծառայող, ԱՄՆ-ի կողմից՝ շուրջ 350 զինվորական: Զորավարժությունների նպատակը Վրաստանի ու ԱՄՆ-ի զինուժերի միջեւ գործակցության որակի բարձրացումն է»,- հայտարարեց Վրաստանի զինված ուժերի միացյալ շտաբի պետի առաջին տեղակալ Վլադիմիր Չաչիբայան:*

*Զորավարժությունները անցկացվեցին երեք փուլով: “Agile Spirit” զորավարժությունները կանոնավոր կերպով անցկացվում են արդեն չորրորդ տարին:*

### ՀԻՄՆՎՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

*Վրաստանի ուսանողների իրավունքների լիգայի նախաձեռնությամբ, Վրաստանի մասշտաբով հիմնվում է Վրաստանի ուսանողների իրավունքի լիգային ենթակա «Վրաստանի աշակերտների իրավունքների կենտրոն», որի գլխավոր նպատակն է պաշտպանել աշակերտների իրավունքները, նրանց ծանոթացնել աշակերտների համար վերապահված իրավունքներին, ուսանողների իրավունքների լիգայի կողմից իրականացվող նախագծերին:*

### ԿԱՆՈՆԱՎՈՐ ՉՎԵՐԹԵՐԸ ԿՎԵՐՍԿՍՎԵՆ

*Ռուսաստանի օդային տրանսպորտի դաշնային գործակալությունը թույլատրել է Թբիլիսի կանոնավոր ավիափոխադրումներ կատարելու հնարավորություն ընձեռել «Աերոֆլոտ» ավիաընկերությանը այն բանից հետո, երբ «ստացվել է կանոնավոր օդային հաղորդակցությունը վերսկսելու վերաբերյալ Վրաստանի ԱԳ նախարարության պատասխան նոտան»:*

*Նշենք, որ Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ ավիահաղորդակցությունը դադարեցվել էր 2008 թվականի օգոստոսին՝ կապված Ցխինվալիի տարածաշրջանում ծավալված զինված հակամարտության հետ: Չարտերային թռիչքները վերսկսվել են 2010 թվականի օգոստոսին:*

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԼՈՒՐՋ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ

*Թբլիսիի «Ռեդիսոն» հյուրանոցում անցկացված ներդրումային միջազգային խորհրդաժողովին Վրաստանի էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ Վրաստանը Եվրամիությունից ֆինանսական ծրարի տեսքով լուրջ օգնություն է ստանում:*



«Մինչեւ ասոցիացման համաձայնագրի ստորագրումը, եվրահանձնաժողովի նախագահ Բարոզուի այցը կարեւոր նշանակություն ունի: Այցի շրջանակներում անցկացված ներդրումային խորհրդաժողովը թույլ տվեց քննարկելու համատեղ մի շարք ծրագրեր: Մասնավորապես, եվրոպական բանկը մտադիր է հիմնել ֆինանսական հատուկ լծակ, որպեսզի ազատ առեւտրի պահանջների համաձայն, վրացական ընկերությունները ֆինանսավորվեն այդ ծրագրով, ինչը թույլ կտա վրացական արտադրանքը հասցնել եվրոպական չափորոշիչներին: Նաեւ նշեմ, որ ստորագրվեց ջրամատակարարման բարելավման համար Եվրամիության կողմից 8 միլիոն եվրոյի հատկացման համաձայնագիրը: Դա Եվրամիության հատուկ օգնությունն է: Բացի այդ, մակրոտնտեսական խրախուսման համար նախատեսված է հատկացնել 46 միլիոն եվրո: Եվս 51 միլիոն եվրո կհատկացվի ազատ առեւտրի չափորոշիչների հասնելու համար: Ինչպես տեսնում եք, Եվրամիության հատկացված ֆինանսական ծրարը բավականին լուրջ է»,- հայտարարեց նախարարը:

Գիորգի Կվիրիկաշվիլու խոսքերով, Վրաստանի կառավարությունը հնարավոր ամեն ինչ կանի հնարավորինս կարճ ժամանակահատվածում իրականացնել տնտեսական ճյուղերի արդիականացումը եւ վրացական ձեռնարկությունները մոտեցնել եվրոպական շուկայի չափորոշիչներին:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

# «ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎՆԱՍ ՉԻ ՀԱՍՑՆԻ»



*Եվրամիության հետ ասոցիացման մասին համաձայնագիրը չի խանգարի հարեւանների, այդ թվում՝ Ռուսաստանի հետ, Վրաստանի առեւտրական հարաբերություններին, բայց հնարավոր են առանձին տեխնիկական մանրամասների փոփոխություններ:*

Այդ մասին հայտարարեց Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն:

«Մենք ազատ առեւտրական հարաբերություններ ունենք մեր հարեւանների հետ եւ այն, որ մենք ազատ առեւտրական գոտի ենք բացում Եվրամիության հետ, ոչ մի կերպ չի վնասի մյուս երկրների հետ մեր հարաբերություններին: Մենք ցանկանում ենք պարզաբանել բոլոր նրանց, ովքեր առեւտրական հարաբերություններ ունեն մեզ հետ, որ Եվրամիության հետ մեր ասոցիացումը որեւէ մեկի դեմ ուղղված ակցիա չէ»,- հայտարարեց Փանջիկիձեն՝ լրագրողների հետ կայացած հանդիպմանը:

Դրա հետ մեկտեղ նա պարզաբանել է, որ հարեւանների հետ առեւտրական հարաբերություններում հնարավոր են առանձին փոփոխություններ, որոնք միայն տեխնիկական բնույթ կկրեն:

«Բնականաբար, կարող են որոշակի փոփոխություններ լինել այդ հարաբերություններում, բայց մեր նպատակն է Վրաստանը վերածել այնպիսի մի վայրի, որտեղ հնարավոր կլինի համագործակցությունը եւ չի լինի դիմակայություն: Ելնելով դրանից՝ կարող է պահանջվել տեխնիկական մանրամասների փոփոխում, բայց մեր սկզբունքային ցանկությունն այն է, որ Եվրոպայի հետ ասոցիացման համաձայնագիրն ու մերձեցումը մեզ է՛լ ավելի մոտեցնեն մեր հարեւաններին եւ ոչ մի դեպքում չխանգարեն գոյություն ունեցող առեւտրական հարաբերություններին»,- ընդգծեց Փանջիկիձեն:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ՊԱԱՏԱ ԶԱՔԱՐԵԻՇՎԻԼԻ. «ԱԲԽԱԶԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԲԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ ԴԵՌԵՎՍ ՉԻ ՔՆՆԱՐԿՎՈՒՄ»

*Աբխազիայի տարածքով երկաթուղային հաղորդակցության վերականգնման հարցն առայժմ կոնկրետ քննարկման փուլում չէ, թեեւ տեսանելի ապագայում այն կարող է քննարկման առարկա դառնալ Վրաստանի ու Ռուսաստանի միջեւ:*



Այդ մասին հայտարարեց Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին:

«Այդ հարցում ընդգրկված են բազմաթիվ կողմեր ու շահեր եւ այդ ուղղությամբ անհրաժեշտ է մանրակրկիտ աշխատանք կատարել: Դեռ Բիձինա Իվանիշվիլին (Վրաստանի նախկին վարչապետ) քաղաքական մակարդակով ասել էր, որ դա կարեւոր թեմա է եւ պետք է քննարկվի: Բայց առայժմ այդ հարցը կողմերի միջեւ չի քննարկվել»,- հայտարարեց Զաքարեիշվիլին:

Նա ընդգծեց, որ եթե Աբխազիայի տարածքով երկաթուղային հաղորդակցության վերականգնման հարցը հրատապ դառնա, ապա այն կդիտարկվի Վրաստանի վարչապետի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցերով հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեի եւ ՌԴ-ի արտաքին գործերի փոխնախարար Գրիգորի Կարասինի միջեւ բանակցությունների ձեւաչափով: «Դա վրաց-ռուսական հարաբերությունների թեմաներից մեկն է, եւ մենք ունենք հատուկ ձեւաչափ, որում կարող է քննարկվել այդ հարցը»,- ասաց Զաքարեիշվիլին: «Այդ հարցում ընդգրկված են բազմաթիվ կողմեր ու շահեր եւ այդ ուղղությամբ անհրաժեշտ է մանրակրկիտ աշխատանք կատարել»,- ընդգծեց Զաքարեիշվիլին:

Նշենք, որ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը՝ Թբիլիսի կատարած այցի ժամանակ, պատասխանելով աբխազական երկաթուղու վերաբացման վերաբերյալ հարցին, նշեց, որ, բնականաբար, Հայաստանը շահագրգռված է երկաթուղու այդ հատվածի վերաբացմամբ, թեպետ հավելեց, որ հարցի լուծումը միայն Հայաստանից ու Վրաստանից կախված չէ, որ դա քաղաքական հարց է եւ կարգավորվելու է բոլոր շահագրգիռ կողմերի շահերի հաշվառմամբ:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ




*Հունիսի 20-ին Հայաստանի Դիլիջան քաղաքում անցկացվեց Եվրամիության Արեւելյան գործընկերության ծրագրի շրջանակում իրականացվող Հայաստան-Վրաստան տարածքային համագործակցության ծրագրի համատեղ կառավարման կոմիտեի (ՀԿԿ) առաջին նիստը:*

Այն անցկացվեց Հայաստանի տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանի եւ Վրաստանի տարածքային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարարի առաջին տեղակալ Թենգիզ Շենգելաշվիլու համանախագահությամբ: Եվրամիության կողմից ֆինանսավորվող Հայաստան-Վրաստան տարածքային համագործակցության ծրագրի հիմնական նպատակը տեղական իշխանությունների, համայնքների եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջեւ միջսահմանային կապերի ամրապնդումն է՝ օգնելով մշակելու համատեղ լուծումներ վերոնշյալ շրջաններում սոցիալական եւ տնտեսական զարգացման ընդհանուր մարտահրավերները հաղթահարելու համար: Ծրագրի շահառու են Հայաստանի Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերը, Վրաստանի՝ Քվեմո Քարթլիի ու Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանները:

Կոմիտեի նիստում քննարկվել եւ հաստատվել է Հայաստան-Վրաստան համատեղ գործնական ծրագիրը, որը մշակվել է Հայաստանի տարածքային կառավարման նախարարության եւ Վրաստանի տարածքային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարարության համատեղ ջանքերով՝ Արեւելյան գործընկերության տարածքային համագործակցության ծրագրի աջակցությամբ: Կոմիտեի նիստում մասնակիցները նաեւ վերահաստատել են Հայաստան-Վրաստան տարածքային համագործակցության ծրագրի նպատակները, առաջնահերթություններն ու համատեղ մարտահրավերները:

Համատեղ կառավարման կոմիտեում ընդգրկված են երկու երկրների պետական կառավարման, ՏԻՄ-երի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ Արեւելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի ազգային պլատֆորմի ներկայացուցիչներ:



ՈՒԿՐԱԻՆԱ

## ՀՐԱԴԱԴԱՐ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

*Ուկրաինայի ուժային գերատեսչությունները միակողմանի կարգով կդադարեցնեն կրակը երկրի արեւելքում, որպեսզի զինաթափվելու հնարավորություն ընձեռեն անօրինական զինված կազմավորումների անդամներին եւ ապահովեն բոլոր նրանց մեկնումը երկրից, ովքեր դա ցանկանում են: Այդ մասին հայտարարել է Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոն: «Ծրագիրը (նախագահի խաղաղության ծրագիրը) սկսվում է կրակի միակողմանի դադարեցման վերաբերյալ իմ հրամանով: Դրանից անմիջապես հետո մենք պետք է նախագահի խաղաղության ծրագրի աջակցություն ստանանք Դոնբասի իրադարձությունների բոլոր մասնակիցների կողմից: Շատ կարճ ժամանակում»,- հունիսի 18-ին Կիեւում լրագրողներին ասել է Պորոշենկոն:*

*Նրա խոսքով՝ հրադադարի ժամանակը շատ կարճ է լինելու, այդ ընթացքում պետք է տեղի ունենա աշխարհազորայինների զինաթափումը, ինչպես նաեւ կարգուկանոն հաստատվի տարածաշրջանում:*

ՄԱԿ

## ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԶՈՀՎԵԼՈՒ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋ

*ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հայտարարություն է ընդունել, որով կոչ է անում հետաքննել Լուգանսկի մերձակայքում հրետակոծման հետեւանքով «Ռուսաստան 1» հեռուստաալիքի լրագրող Իգոր Կորնելյուկի եւ հնչյունային ռեժիսոր Անտոն Վոլոշինի զոհվելու հանգամանքները:*

*ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը «մտահոգություն է հայտնել Ուկրաինայի ճգնաժամը լուսաբանող լրագրողների ձերբակալումների եւ նրանց վրա հարձակումների բազմաթիվ դեպքերի կապակցությամբ»: ԱԽ-ի անդամները ցավակցություն են հայտնել զոհված բոլոր լրագրողների ընտանիքներին, այդ թվում՝ ոչ միայն Ռուսաստանի հեռուստառադիոընկերության նկարահանող խմբի աշխատակիցների, այլեւ իտալացի լրագրող Էնդի Ռոկելլիի, որը մայիսի 25-ին հրետակոծման հետեւանքով զոհվել էր Սլավյանսկի մերձակայքում:*

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

## ՄԱԿՐՈՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ

*Եվրահանձնաժողովը Ուկրաինային տրամադրել է 500 միլիոն եվրոյի մակրոֆինանսական օգնություն:*

*«Եվրահանձնաժողովը Եվրամիության անունից 500 միլիոն եվրո է տրամադրել Ուկրաինային: Դա փոխառության առաջին մասնաբաժինն է երկրի համար մակրոֆինանսական օգնության նոր ծրագրի շրջանակներում»,- նշել են Եվրամիության հանձնաժողովում:*

*Ինչպես ճշտել է Եվրահանձնաժողովի ներկայացուցիչ Սայմոն Օ՛Քոնորը, այդ միջոցներն Ուկրաինային են տրամադրվել որպես օգնություն պետական բյուջեի հաշվեկշռի օժանդակման համար:*

ԻՍՊԱՆԻԱ

## ԿԱՅԱՑԱՎ ՆՈՐ ԹԱԳԱՎՈՐԻ ԵՐԴՄՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

*Մադրիդում հունիսի 19-ին տեղի է ունեցել Իսպանիայի 46-ամյա Ֆիլիպ 6-րդ նոր թագավորի երդմնատվության արարողությունը: Այն տեղի է ունեցել երկրի խորհրդարանի Պատգամավորների կոնգրեսում:*

*Այս շաբաթ ընդունված օրենքի համաձայն՝ արքայազն Ֆիլիպը Իսպանիայի թագավոր է դարձել կեսգիշերին. այդ պահին է ուժի մեջ մտել գահից հրաժարվելու վերաբերյալ նրա հոր՝ Խուան Կառլոս Առաջինի կողմից ստորագրված փաստաթուղթը:*

*76-ամյա Խուան Կառլոսն ինքը Պատգամավորների կոնգրեսում ներկա չի եղել: Նա միջոցառումներին միացավ Թագավորական պալատում կայանալիք ընդունելությանը:*